

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ՕԳՈՍՏՈՍԻ, ՏԻՔԵՐԻ ԵՒ ՆԵՐՈՒՆԻ ԺԱՄԱՆԱԿ

CUS SUCIUSOIT

Թերցող հասարակութեան առաջ»։ Կը հետեւի բոս իւր գրութեան «Իւրաքանչիւր կրօնի... ուսումնասիրութեան ամենահեղինակաւոր և ընդհանուր կողմից ճանաչուած մասնագէտներէն, որ և կատարելու ենք բարեխղճութեամբ»։

Գիրքս կը բովանդակէ 433էջեր՝ ի բաց առեալ Յասաչաբան և իտմանդակութիւնն։ Կը ճառէ կրօնքի սկզբնաւորութեան վրայ և ապա հետզհետէ կը պարզէ «Դասինական ազգերի կրօնը, Եգիպտացիների կրօնը, Ասորա-Բարելական կրօնը, Իրանական կրօնը, Հնդկական կրօնը, Չինացիների և Ճափոնացիների կրօնը, Գերմանների, Կելտերի և Սլաւոնների կրօնները, Յուների և Հռովմայեցիների կրօնը, Իսլամի կրօնը, Իսրայէլի կրօնի պատմութիւնը, կրօնի և կրօնի գիտութեան էութիւնը, և ընթերցողաց և ուսումնասիրաց գիւրութեան համար կը յաւելու Անուանց Յանկը։

Ընդհանուր գծագիրն ունենալով առջևնիս և ակնարկ մը տալով մասնինս մէջ նիւթոց դրութեան և ճառելու ոճոյն՝ կրնանք հետեցնել, որ Արգոյ Հեղինակն լուրջ և ծանր գրութեանս մէջ շատ տեղեր կը հրապուրէ ընթերցողը՝ աւարտելու իւր ընթերցումը հեշտեաւ։ Յարգելով ամէն ոքի ազատ խորհրդածութիւնները՝ ներուր մեզ, առանց խորատուզուելու քննադատութեան և Հոգեբանութեան Տրամախոնութեանց մէջ, զայս արտայայտել՝ թէ մասեանս իւր տեսակին մէջ առաջինն ըլլալով՝ կան ինչ ինչ կէտեր, որ խորթափանց քննութիւններէ վերջ միայն կարելի էր հաստատել կամ մերժել, զորս աւելորդ կը համարինք ներկայացնել մի առ մի ուսումնասիրաց առջև, որ ակններ և կը տեսնուին ամէն լուրջ ընթերցողի։

\* \* \*

Իմաստութիւնը միայն՝ գմարդ օգտակար կ'ընէ հայրենեաց (Պիտա)։

Ո՛չ դէմքով՝ այլ ժաքով և սրտով ջանս մատուր և գեղեցիկ ըլլալ։

Առանձնութիւն, լուսութիւն՝ հիմ և սէր ի մասսանոց։

Դու գրեզ խրատէ, քան թէ սիրելիքդ։

Պարթևաց փրաուտ թագաւորի մեռնելէն վերջ՝ աւագանին դադարեցնելու համար ընտանի պատերազմները, խնդրեց Կեսարէն փրատայ երէց որդին՝ Վոնոնը իրենց թագաւոր։ Սա ժամանակ մը իշխեց Պարթևաց, բայց երբ արհամարհուեցաւ փախտեամբ ինկաւ Հայաստան և Պարթևաց թագաւորեց Արտաւան։

Հայք՝ այս միջոցին անտերունչ էին։ Անտոնիոս « Իննգաւ բարեկամութեան » բռնեք, շղթայեք էր Տիգրանայ Արտաւագ որդին՝ Հայոց թագաւորը և յետոյ սպաններ էր։ Թէպէտ Արտաւագայ որդին՝ Արտաշիս Արշակունեաց օգնութեամբ կըրցաւ տիրել Հայաստանի, բայց իրեններէն դաւով սպանուեցաւ և կայսրը թագաւորեցուցեր էր զՏիգրան, որ և Տիրիիոս-Ներոնի օրով հաստատուեցաւ իր իշխանութեան մէջ, այլ երկար չտեց իւր որդւոց տիրապետութիւնը։ Օգոստոս դրաւ Հայոց վրայ թագաւոր՝ Արտաւագը, այլ Հայք մերժեցին զինքը, կայսրը թագաւորեցուց իրենց վրայ Արիշտարզան մարը։ Հայք չհպատակեցան ասոր որդւոց և ժամանակ մը իրեն Երազովա տիկնոջ խոնարհեցան, բայց և զայս ալ մերժեցին։ Ճիշտ՝ այս ատեններ՝ Վոնոն՝ Հայոց աշխարհն ինկաւ փախտեամբ և Հայք զինքը անուանեցին իրենց թագաւոր։ — Արտաւան՝ Պարթևաց թագաւորն լսելով զայս սպառնացաւ Վոնոնի։ Հռովմայեցիք վախցան նոր պատերազմի մը զրգոտութենէն, նենգութեամբ մը բռնեցին զՎոնոն և բանտարկեցին։ Տիրեր զրկեց Հայաստան Գիերմանիկոս Խաղաղելու հայերը (էջ 88)։

Տակիտոս կ'ըսէ. «անդուտ ի սկզբանէ կեղակարծ էր հաստատութիւն Հայոց ըստ բնաւորութեան իւրեանց և ըստ դրից աշխարհին, զի ի բազում զաւառաց մերոց պատեալ մինչև ի Մարս տարածանի

ի մէջ երկուց մեծամեծ ինքնակալութեանց , զրգռեալ յաճախ ընդ Հոովմայեցիս աստ-  
լութեամբ և ընդ Պարթևս նախանձու »  
(էջ 96) : Հայք խնդրեցին Կեսարէն թա-  
գաւորեցնել իրենց վրայ Պոլիսոնի Պոն-  
տացւոց թագաւորին Զինոն որդին : Գեր-  
մանիկոս զիջաւ և Արտաշատու մէջ ա-  
ւագանոյն հասանութեամբը արքունական  
թագով պսակեց զինքը , որ կոչուեցաւ  
Արտաշէս :

Արտաշէս Պարթևաց թագաւորը Հայոց  
վրայ թագաւոր դրաւ Արտաշէսի մեծնե-  
լէն վերջը իր երէց Արշակ որդին և միտք  
ունէր տիրել բոլոր Հայաստանի՝ օգտուե-  
լով Տիրբրի ծերութենէն : Իր աւագանիէն  
ոմանք մատնեցին խորհուրդս Տիրբրի (էջ  
252) : Փութաց կայսրը և զրկեց Հայաս-  
տան զօրքով Փրատայոյ որդին Փրատոր  
տիրելու Պարթևաց , այլ վարժ ըլլալով  
հոովմէական կենաց և ուզելով այժմ յար-  
մարիլ Պարթևաց՝ այս չափազանց փո-  
փոխ կեանքէն ընկճուած հուանդացաւ և  
մեռաւ : Տիրբր խորամանկութեամբ ջանաց  
թշնամիներ յարուցանել Արտաշէսայ ղէմ .  
ուստի Արտաշէսայ ազգականներէն Տա-  
րաղատը հանեց անոր ախոյեան , և հաշ-  
տեցնելով զՄիհրդատ վրաց իշխանը իր  
Փարսման եղբոր հետ՝ հրապուրեց տիրել  
Հայաստանի :

Միհրդատ և Փարսման՝ զէնք ունենա-  
լով նենգութիւն և կաշառք՝ զմեծեցին Հա-  
յոց աշխարհն , տիրեցին Արտաշատ քա-  
ղաքին և տագնապեցուցին Արշակ թա-  
գաւորը : Արտաշէս՝ օգնութիւն զրկեց Ար-  
շակայ՝ Որովդ՝ միւս որդին բազմութեամբ  
զօրաց : Փարսման ոտքի հանեց Աղուան և  
Սարմատացի ազգերն ալ , և կ'ուզէր բաժ-  
նել թշնամուցն զօրութիւնը : Որովդ անա-  
պարեց , բռնեց կասպիական դրունքը , բայց  
վիրք անզուսպ արշաւեցին Հայաստան  
Սարմատացիներով հանդերձ , բանակեցան  
Որովդայ ղէմ և սաստիկ կռուոյն միջոց  
վիրաւորեց Փարսման զՈրովդ և այսու  
յաղթութիւնը կորուսին Պարթևք :

Արտաշէս աւելի զօրեղ բանակով կ'ու-  
զէր խորտակել Աղուանները և վրացիքն

ու տիրել Հայոց : Վիտիլլիոս Հոովմէական  
լէզէոններով սպառնացաւ Միջագետք մըտ-  
նել , վախցաւ Արտաշէս և հեռացաւ Հա-  
յոց աշխարհէն : Կը պատմեն երկրին բնա-  
կիշները , որ երբ Հոովմէական բանակն հա-  
սաւ Եփրատայ ափունքը , Էփրատ առանց  
ատատ անձրևի ինքն իրեն կը յորդէր ,  
կ'ուռնուր և փրփրադէզ ալիքներով կը  
կազմէր պսակներ՝ յաջողութեան նշաններ :  
Արնոսպատ , որ ժամանակաւ Տիրբրի օգ-  
նէր էր Գողմատացւոց ղէմ պատնարգմե-  
րուն մէջ , որ և վտարանդի եղբոր էր հայ-  
րենիքէն և ապա թագաւորին հետ հաշ-  
տուելով մարզպետ կարգուած էր Միջա-  
գետքի՝ հազարաւոր հեծեալներով եկաւ  
բանակ . որուն հետեւեցան և ուրիշներ :  
Յիշեցուց Վիտիլլոս Տարաղատայ՝ Փրատտ  
հաւը , և իրեն դաստիարակ Տիրբրը՝ եր-  
կուցն ալ հռչակաւորք , յիշեցուց մեծա-  
րել Հոովմայեցիները և պատկառ մնալ  
(էջ 257) :

Կ. Պլաւտոսի և Սեքս. Պապինիոսի  
բղէշխներու ատեն շատ անգլմութիւններ  
կատարուեցան : Չկրցաւ և ոչ Տիրբրան ,  
որ երբեմն Հայոց թագաւոր էր , ազատիլ  
վայրագութենէ . թագաւորն քաղաքացիին-  
քով մահուան դատապարտուեցաւ (էջ 258) :

Տարաղատ ընդունելի եղաւ Պարթևաց ,  
տիրեց Նիկեափոր , Անթիմուս և այլ քա-  
ղաքաց , երբ Արտաշէս Սկիւթացւոց կող-  
մերն էր : Տարաղատ ճանչցուեցաւ թագա-  
ւոր Պարթևաց Սուրէնի ձեռամբ կտեսի-  
փոնի մէջ , Փրատտ և Հերոն չմնացին ի-  
րեն համախոհ , գնացին Վրկան , ուր Արտա-  
շէս ցնցոտիներ զգեցած կը ճարէր որսով  
իւր ոգեպահիկը : Զիրենք գտնելով օգնա-  
կան՝ քաջալիբուեցաւ , զօրաժողով ըրաւ ,  
հասաւ Սելեկիս , յանկարծակիի բերաւ  
Տարաղատը , որ անպատրաստ գտնուելով  
փախաւ Ասորիք<sup>1</sup> :

Հայոց Միհրդատ թագաւորն կողոնայ  
խորհրդով դարձաւ վերստին թագաւորեալ

1. Կ'ընդհատ հոս Տակիտայ Տարեկոց Է, Ը, Թ,  
Ժ, և ՓԱ, զլիսն մի մասը . որով կը պակասի կըստ  
լայի և կըզոտայ վեց տարիներու զեղբերը :

լու Հայոց վրայ՝ իր Փարսման եղբոր՝ վրաց թագաւորին օգնութեամբն, Պարսիք տաղտկացան խուտարգայ անգլթու թիւններէն, որ ապաննեց Սրտաւան եղբայրը, անոր կինը և որդին, հրաւիրեցին քաջայանդուզ այրն վարդան, որ երկու աւուր մէջ կտրեց երեք հազար ասպարէզ և հասաւ խուտարգայ վրայ, հալածեց զինքը, տիրեց ամբողջ գաւառին բացի Սելեկիացիներէն, որոնք իր հօրմէն ալ ապստամբեր էին, և պաշարեց զՍելեկիս: Խուտարգ Տայոց և վրկանաց օգնութեամբ հասաւ ազատեց քաղաքս պաշարմանէն և վարդան մեկնեցաւ ղէպ ի Բակտրիսա:

Երբ արեւելք այսպէս երկպառակուած էր՝ Միհրդատ հռովմէական զօրքերով մըտաւ Հայաստան, նուաճեց բերդերը: Փոքր Հայոց կոտիշ արքայն, որուն հետ միացան նախարարներէն ոմանք արգելք եղան ժամանակ մը Միհրդատայ յաղթանակներուն, բայց բռնադատուեցան կայսեր հրովարտակին վրայ խոնարհիլ և միաբանիլ, այսու խաղաղութիւն տիրեց Հայոց մէջ:

\* \* \*

Հ Ա Յ Գ Ա Կ Ա Ն Մ Ա Մ Ո Ի Լ

« Գ Ի Ի Կ Ա Տ Ն Տ Ե Ս »

Թիֆլիզու հորիզոնին վրայ տարւոյս սկիզբը ծագեցաւ այս ուշագրաւ շարթաթիւթը:

Իբրև մասնագիտական հիւղի պատկանող թերթ՝ յոյժ գնահատելի է դրած նպատակին ու սկսած քայլերուն համար: Եւ թէպէտ չէ թևակոխած դեռ իր քսաներորդ թիւը, սակայն իր ընթացքը կը յուսացընէ ուրիշ շատ մը քսաններ կամ գէթ փափագելի կը թողու մեզ:

Թերթին խմբագրութիւնը անոր առաջին թուոյն մէջ — ինչպէս սովորութիւն է — դրած է իր ծրագիրը, և կը պարզէ թէ «Գիւղատնտես»ը «Իրևն նպատակ է դրել՝ ժողովելով իր շարքը մի կողմից մեր

երկրի զանազան մասերուն ցրւած գիւղատնտեսներին, միւս կողմից ոնդի և նրա արդիւնքներէ ղնտ ցործ ունեցող անձանց և ինտելիգենտ գյւերին, միասնաձայն շարքերով օգնուրեան գալ երկրագործարեամբ և գիւղատնտեսութեամբ պարապող մեր ժողովրդի»: Եւ ստուգիւ պարզ լոյս տեսած թիւերը կը պարունակեն փորձառութեամբ և գիտութեամբ գրուած յօդուածներ, որոնք միանգամայն շատ օգտակար և յարգելի խորհուրդներ են, վասն զի, ինչպէս կ'ըսէ խմբագրութիւնն ալ «Ամեն մի ցարծնական խորհարդ, ամեն մի դէպի կատարելոյսին տակոյ ցոցմունք կուենայ իր նշանակութեամբ, որովհետև այդ կողմից ևս (գիւղացին) կամ ոչինչ չցիտե, իսկ երբ գիտե կ, նրա իմացանքը շատ քերի է և անկատար»: Եւ պարբերակներ մամող աչք անցընելէ վերջ՝ շատ հաւանական կ'երևնայ մեզ որ «Գիւղատնտես»ի բաժանորդները խիստ զոհ մնացած ըլլան, զայս կը հաստատէ նաև նոր հասած վերջին թիւ 14ը, որուն ճակատը դրուած ծանուցում մը կը տեղեկացնէ թէ սպառած N N 1. 2. 3. և որ և է թիւի մ'ալ կրկին օրինակ չգտնուիլ: Ասով բաժանորդներու բազմութիւն մը կը նշմարուի, որ թերթի մը նկատմամբ շատ անգամ օգտակարութեան վրկայութիւն կրնան դիտուիլ: «Գիւղատնտես»ի մէջ աս աւելի կը տեսնուի քան անոր հասրը 10 կողմէ ըլլալը: Յիբրաի անպատճառ պէտք է ամէն գիւղացի, թէ որ կրնայ — բաժանորդագրուիլ — անոր: Մասնագիտական թերթի մը բաժանորդ գրուիլը բնականաբար կը յարմարի աւելի մասնագէտներուն ու այդպիսի նիւթերու հետամուտ եղողներուն, և միթէ գիւղացի. ժողովուրդը չէ առտուրնէ մինչև իրկուն մշակութեամբ, հօտաղով և մեղուաբուծութեամբ զբաղողը:

Այն օգտաշատ ձեռնարկին զազափարը առաջին վայրկենին իսկ խրախուսուելով՝ ո՛չ միայն յատուկ յօդուածագիրներ շահած է, այլ նիւթապէս ալ նպաստած են անոր բուպլիի գումարներով՝ կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութիւնը,